 զօրավարին եւ սրդւոյ նորա  
 Մարտիրոսին, և սրբոյն Թէո-  
 դորոսի զօրավարին, Գէորգաց  
 զօրավարին եւ Մերկերիոսի  
 զինուորին. Անդրէի զօրա-  
 վարին, և չորից զինուորացն՝  
 Բաստի, Եւսեբի, Եւտիբի և  
 Բասիլիդեոյ. Սրբոյն Մինասայ,  
 Երմոգինեայ և Գրաբոսի, և  
 սրբոց Ատովմեանց. Ոսկեանց  
 և Սաւքիասանց, Խարիթեանց  
 և այլ ամենայն սրբոց բարե-  
 խօսութեամբն պահեան զծա-  
 ռայս քո. ամէն:

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ԱԿԱՆ ՉԱՐԻ

ԵՒ

ԼԵՋՈՒԻ ՉԱՐԻ

Տէր Աստուած մարդասէր,  
մարդասիրի Հօր որդի, դու ես  
պահապան և օգնական յու-  
սացելոցս 'ի բեզ ողորմու-  
թեամբ քո 'ի ծառայս, և պա-  
հեան անփորձ 'ի չարէ և ան-  
սայթաք յորոգայթէ երեւելի  
եւ աներեւոյթ թշնամւոյն .  
պահեան 'ի չար աչաց և 'ի չար  
լէզուէ, 'ի սրոյ և յամենայն  
հարուածոց երեւելեաց եւ  
աներեւութից պահեան զճա-  
ռայս քո . ամէն :

ԱՂՕԹՔ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐԶԻ

Աղաչեմ զբեզ Քրիստոս  
փրկիչ աշխարհի . հայեան յիս  
և ողորմեան և շնորհեան նե-  
րումն բազում անօրէնութեան  
իմոյ . քանզի անարգեցի զա-  
մենայն բարիսն զոր արարեր  
ինձ 'ի մանկութենէ իմմէ . զի  
զտխմարս և անիմաստս արա-  
րեր անօթ գիտութեանս :  
Յաճախեաց յիս շնորհքն քո  
և լցոյց զբազց իմ և զճարա-  
լիմ զովացոյց, և լուսաւորեաց  
զլուսաւարեալ միտս իմ, և ժո-  
ղովեաց 'ի մոլորութենէ զսոր-

հուրդս իմ և ելից 'ի ծոց իմ.  
 վասն որոյ անկեալ երկիրպա-  
 փանեմ առաջի քո՝ խոստո-  
 վան եղեալ զբարեբարու-  
 թենէ քումմէ, և աղաչեմ,  
 դադարեցն առ իս զխոստումն  
 շնորհի քոյ, և սրահեան զնա 'ի  
 փանձի քում. զի դարձեալ  
 տացես ինձ զնա յաւուրն  
 յայնմիկ: Մի բարկանաբ ինձ  
 մարդասէր. զի ոչ հանդուր-  
 ժեմ սարսուռեաց քոյ. յա  
 զադս որոյ և աղաչեմ ժտե-  
 լով, զի առտուել քան զչափն  
 յաճախեաց յիս շնորհն քո.  
 վասն զի և լեզու իմ տկարու-  
 ցաւ ոչ կարելով խօսիլ բղ-

նմանէ. հիացան և միտք իմ  
 ոչ բերելով զբազմութիւն  
 ալեաց նորա: Աբրպարանք և  
 ճառագայթ օրհնելոյ Հօրդ,  
 դադարեցն առ իս 'ի հոսանաց  
 նորա. զի իբրեւ զհուր բոր-  
 բորեալ բոցակիպեացէ զերի-  
 կամունս իմ և զսիրտ իմ. և  
 անդր դարձեալ պարգեւեան  
 ինձ զնա և կեցն զիս յարքա-  
 յութեան քում. մի յիշեր  
 զանօրէնութիւնս իմ. յան-  
 դգնիմ և հայցեմ. տնւր ինձ  
 զննդբուածս իմ, և սրտ' առ  
 իս օթեվան օրհնեալ հարբ  
 բով յաւուր յայտնութեան  
 քոյ, շնորհեան ինձ, Քրիս-



տոս, զհայցնուածս իմ, զև դու  
միայն ես տուիչ կենաց իմոց,  
եւ քեզ ընդ Հօր Հօգւովն  
Սրբով փառք սոյժմ եւ յաւի  
տեանս . ամէն :



ՄԱՂԹԱՆ Ք

ԱՌ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՄԵՐ

Լուսաւորիչ հայր պարծա  
նաց, ընկալ զբանս զայս մաղ  
թանաց . եւ աղաչեան զՀայրն  
փառաց, ջնջել զգիր մեր  
յանցանաց : Այլ եւ բարեխօ  
սութեամբ երեք հարիւր ութ  
եւ տասն հայրապետացն եւ ուղ  
ղափառ եպիսկոպոսացն . աղօ  
թիւք պահեան տէր Աստուած  
զճառայս քօ . ամէն :



ԱՂՕԹՔ

ԱՌ ԴԻՍՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
Ս • ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐՍՆԻ

Տաճար Աստուծոյ և բնակարան սուրբ Հոգւոյն, 'ի բէն սուրբ Աւազանաւն կոչեաց յորդեգրութիւն Հօրն երկնաւորի: Այսօր 'ի բեզ կազմեցաւ պատարագել գառն անարատ: Եւ ես զիմեալ եկի սու դուրս քօ • եւ աղաչեմ զբեզ, մաքրեան զիս վերստին լուացմամբ, և սրբեան 'ի մեղաց և արան արժանի մտանել առաջի սրբոյ Սեղանոյդ յերկրպագութիւն:

Բ Ա Ն

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ընդգիմամբար գիւաց այս նուագ աղօթից եւ գիւատարուա ջերմատագնապ ակատարութեանց Աստուծով փարատիչ:

Արդ՝ այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ Հայր ամենաստեղծ: Անունդ ահաւոր, ձայն սարսափելի, կոչումն ընտանի, բան համբուրելի, աղդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անբըննելի, գոյութիւն անձառելի, իսկութիւն անբաւելի, զօրութիւն անբըննելի, կամբ ամենաբարի, տէրութիւն ան

սահմանելի, մեծութիւն ան-  
 չափելի, բարձրութիւն ան-  
 բովանդակելի, որքանութիւն  
 անկշռելի, առաւելութիւն  
 անհասանելի, պատճառ որդ-  
 ւոյ հայրութեամբ այլ ոչ  
 նախադրութեամբ:

Քեւ և ՚ի ձեռն քոյդ անպա-  
 րագիր զօրութեանդ սաստեան  
 տագնապող և դիւսկան տեն-  
 դիս ջերմութեան, զոր սպրռ-  
 դեալ մուծաւ ընդ մեղաց, զի  
 փախիցէ ՚ի մարդոյս զարհու-  
 րեալ ՚ի սխրալի և յանբաւելի  
 արեանդ վտակի գառինդ երկ-  
 նաւորի, որով սրսկեալ միան-  
 դամ ՚ի մշտնջենաւորս համայն

մայրեցաբ: Եւ արդ՝ յայս  
 պատկառելի խոնարհութենէ  
 արարչակերտս խորհրդոյ՝ ա-  
 մաչեսցէ սատանայ ՚ի գործս  
 չարեաց իւրոցն հրեշտակաց:  
 Տանջեսցի և հալածեսցի, հե-  
 ռայեալ եւ արտաքս առա-  
 քեալ ՚ի շինուածոյ խորանէ  
 բումդ բնակութենէ յար-  
 տաբին իաւարն: Եւ ջնջեալ  
 մայրեան զբրտանուս ողբոյ ՚ի  
 դիմաց մերոց և զհառաչումն  
 ձայնի հեծութեան ՚ի սրտից  
 մերոց: Եւ յիշատակաւ հար-  
 ման հեղուսից, քստմնափուշ,  
 տաժանատեփլ ոգեսպահան-  
 ջից, որով պնդեցաւ Միածինդ

քո յաշտարակ խաչին, ցա-  
 ւեացի չարին: Եւ ՚ի կողահերձ  
 սայրասուր սլաքէ ուժգին  
 բաղխմանէ՝ որով զվերն մեծ  
 ընկալաւ, իսպառ սատակեացի  
 սկզբնարարն մահու: Եւ զի  
 խոնարհեցոյց զգովեալն գը-  
 լուխ յաւանդելն զհոգին ՚ի  
 ծոց քո Բարձրեան, ապստամ-  
 բութիւն անբարի բարուցն  
 բելիարայ ՚ի կոր կործանեացի  
 ամենայնիւ հերբեալ ՚ի կո-  
 րուստ: Եւ զի զօղեալ ծած-  
 կեցաւ անմահն իսկութիւն  
 յորովայնի երկրի, այսու ամե-  
 նաբարձեալն հպարտութիւն  
 կարծեալ գոռողին ՚ի յատակս

մահու դժոխաց մթին ստուե-  
 րին յառեալ դիտեացէ: Եւ  
 յիշեացէ զսուալին հարուածն  
 անբժշկական, որով մահացու  
 գիմամարտութիւն թունից վե-  
 շապին՝ կենարարն կրիւք ա-  
 մենազօրին: Վասն զի ՚ի փառս  
 քո Հայր ողորմութեան իբր  
 ՚ի գովեստ Որդւոց քո Հոգւովդ  
 սրբով զայս խոստովանիմք:  
 Քանզի ոչ պիտակ ինչ սոսկ-  
 զօրութիւն ունի զմիւսէն՝  
 առ մի խորհրդականն խորու-  
 թիւն: Այլ զանսկիզբն բանդ  
 անցուոր ընդ ժամանակդ Հօր  
 փառաւորեմք: Եւ քեզ մի-  
 այնոյ սուրբ Երբորդութեանդ,

հաւասարապատիւ տէրու-  
 թեանդ համարուն անբաժին  
 ինքնութեանդ, օրհնաբանու-  
 թիւն՝ գոհութիւն՝ զօրութիւն՝  
 և անճառ վայելչութիւն մե-  
 ծութեան՝ բարեվիճակ հար-  
 թութեան զուգակշիռ հա-  
 ւասարութեան յաւիտեանս.  
 ամէն :



ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ  
 ԶՕՐԱԻՈՐ ԸՆԴԴԵՄ ԱՄԵՆԱՅՆ  
 ԶԱՐԵԱՑ  
 ԲՆ ԺԲ.

Ընկալ բաղցրութեամբ,  
 տէր Աստուած հզօր, զդառ-  
 նացողիս զաղաչանս : Մատիբ  
 գթութեամբ առ սլատկա-  
 ռեալս դիմօք : Փարատեան,  
 ամենապարգեւ, զամօթական  
 տխրութիւնս : Բարձ յինէն,  
 ողորմած, զանբերելի ծանրու-  
 թիւնս : Անջրպետեան, հնա-  
 բաւոր, զմահացու կրթու-

Թիւնս: Աւարեան, միշտ յաղ-  
 թող, ղեսքողին հաճուԹիւնս:  
 Բացադրեան, վերնային, զմո-  
 լելայն մառախուղ: Կնքեան,  
 կեցուցիչ, ղկորուսչին ընթաց-  
 մունս: Յրուեան, ծածկատես,  
 զմբռնողին չար գտմունս:  
 Խորտակեան, անքննին, զմար-  
 տողին դիմեցմունս: Տեսա-  
 նագրեան քո անուամբդ զու-  
 ասնցոյց երդ յարկիս: Պար-  
 փակեան քո ձեռամբդ զառա-  
 տալ տաճարիս: Գծագրեան  
 քո արեամբդ զմուտ սեմոց  
 սենեկիս: Կերպացն զքո նը-  
 շանդ ՚ի հետս ելից մաղթողիս:  
 Ամբացն քո աշովդ զհանգրս.

տեանս խշտիս: Մաքրեցես  
 ՚ի յաղբից զծածկարան անկող-  
 նոյս: Պահեցես քո կամօքդ  
 զտառապեալ անձն ոգւոյս:  
 Անխարդախ արասցես զքո  
 շնորհեալ շունչ մարմնոյս:  
 Կացուցես շրջափակ զպար  
 զօրուդ երկնայնոյ:

Կարդեցես ՚ի դիմի ընդդէմ  
 դիւայն դասու: Տնւր հան-  
 գիտ բերկրութեան, մահաւ  
 հանգոյնս նիրհման ՚ի խորու-  
 թեան գիշերիս: Բարեխօսու-  
 թեամբ հայցուածոց սրբոյ  
 Ատուածածնիդ և ամենայն  
 ընտրելոց: Ամփոփեալ պա-  
 րուրեան զպատու հան տեսու-

Թեանց, զգայարանացս իմաստից, անդարհութեան զետեղմամբ, ՚ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անըական երազոց, խօլականաց ցնորից: Յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ, և սթափեալ վերստին ՚ի ննջմանէ ծանրութեանց, ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զլաւարթութեամբ ՚ի քեզ արձանացեալ՝ զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց, քեզ ամենօրհնեալ թագաւոր փառաց անձառից, փառաբանողաց երկնագումար

խմբից երգակցեալ՝ յերկինս սուաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն:



### Ա Ղ Օ Թ Ք

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅՆ

Բա՛ն ԽԱ.

Որդի Աստուծոյ կենդանեաց, օրհնեալ յամենայնի հօրդ ահաւորի անքննին ճնունդ, որ տկարանայ առ ՚իքէն և ոչ ինչ. որ ՚ի ծագել անատուեր

նշու լից ողորմութեան քոյ  
 փառաց՝ հալին մեղք, հալածին  
 դեւք, ջնջին յանցանք, խղին  
 կապանք, խորտակին շղթայք,  
 կենդանածնին մահացեալք,  
 բժշկին հարուածք, ողջանան  
 վէրք, բառնին ապականու-  
 թիւնք, տեղի տան տիրու-  
 թիւնք, նահանջին հեծու-  
 թիւնք, փախնսւ խաւարն,  
 մեկնի մէգն, մերժի մառա-  
 խուղն, փարատի մուայն, ըս-  
 պսոռի աղջամուղջն, վերանայ  
 մութն, գնայ գիշերն, տա-  
 րաբրի տագնապն, չքանան  
 չարիքն, հալածին յուսահա-  
 տութիւնքն, և թագաւորի

ձեռն քս ամենակալ, քա-  
 ւիչդ ամենայնի: Որ ոչ եկիր  
 կորուսանել զմարդկան ոգիս,  
 այլ կեցուցանել: Թո՛ղ ինձ  
 զանթիւ չարիսն իմ՝ բազում  
 ողորմութեամբդ, զի դու մի-  
 այն ես յերկնի անձառ եւ  
 յերկրի անզննին, ՚ի տարր  
 քոյի, և յեղերս ծագաց աշ-  
 խարհի, սկիզբն ամենայնի և  
 յամենայնի ամենայն լրմամբ,  
 օրհնեալ ՚ի բարձունս: Եւ քեզ  
 ընդ Հօր և Հօգւոյդ սրբոյ .  
 փառք յաւիտեանս. ամէն:



ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆՍՐԵԿԱՅԻՈՅՆ

Բա՛ն Ղ. Գ. .

Աստուած յաւիտեանական,  
բարերար եւ ամենակալ,  
ստեղծիչ լուսոյ եւ յօրինիչ գի-  
շերոյ, կեանք ՚ի մահու եւ լոյս  
՚ի խաւարի, յոյս ակն ունո-  
ղաց եւ երկայնամուտ թիւն տա-  
րակուսելոց, որ ամենարուեստ  
խմաստութեամբ քո դարձու-  
ցանես յայդ զստուերս մա-  
հու, աննուաղ ծագումն եւ  
անմուտ արեգակն. քանզի  
ոչ զօրէ ծածկել զփառս տե-  
րութեան քոյ խաւար գիշերոյ:

Որում կրկնի ծուներ երկրպա-  
զութեան ամենայն եղելոց,  
երկնաւորաց եւ երկրաւորաց  
եւ սանդարամետականաց, որ  
լսես զհեծութիւն կապելոց  
եւ հայիս յաղօթս խոնարհաց եւ  
ընդունիս զիննդրուածս նոցա,  
Աստուած իմ եւ թագաւոր իմ,  
կեանք իմ եւ ապսււնն իմ,  
յոյս իմ եւ վստահութիւն իմ,  
Յիսուս Քրիստոս Աստուածդ  
ամենայնի, սուրբդ հանգու-  
ցեալ ՚ի հոգիս սրբոց, մխիթա-  
րութիւն վշտոց եւ քաւարան  
մեղուցելոց, որ գիտես զա-  
մենայն յառաջ քան զիննին  
նոցա. առաքեա՛ն զպահպանու-

զական զօրութիւն աջոյ քոյ և  
 փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի  
 և ՚ի դիւէ չարէ : Որպէս զի  
 զյիշատակ սոսկալի և սուրբ  
 քոյ անուանդ միշտ համբու  
 րեալ շրթամբք հոգւով ըզ  
 ձութեան շնչոյ, կեցից պահ  
 պանեալ ընդ այնոսիկ՝ որք  
 կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ :  
 Եւ ՚ի դրոշմէ Խաչի քոյոյ նը  
 շանիդ, զոր աստուածային  
 արեամբ քով ներկեալ նորո  
 գեցեր, և ՚ի նոյն շնորհ որ  
 դեգրութեան զմեզ մկրտե  
 ցեր, և ՚ի փառս պատկերի քոյ  
 նկարեալ յօրինեցեր այսու  
 պարգեւօք աստուածականօք

ամաչեացէ սատանայ, քակ  
 տեսցին մեքենայքն, բարձ  
 ցին որոգայթքն, պարտեսցին  
 մարտուցեալքն, պակասեա  
 ցին զէնքն սայրասուրբ, մեր  
 ժեցի մէգն, փարատեսցի  
 խաւարն, մեկնեսցի մառա  
 խուղն : Բազուկ քո հովանա  
 ցի, և աջ քո կնքեսցէ, վասն  
 զի գթած ես և ողորմած, և  
 անուն քո կոչեցեալ է ՚ի վե  
 րայ ծառայից քոց : Եւ քեզ  
 ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք  
 և իշխանութիւն յաւիտեանս  
 յաւիտենից, ամէն :

## ԱՂԵՐՍ

ԱՌ՝ ՍՈՒՐԲ ՍՌԱՔԵԱԼՍԵ

Անմահ գառին հզօրի,  
Որ միշտ զենեալ և կենդանի,  
Երկոտասան գառանցդ խմբի,  
Զեզ այս աղերս մատուցանէի:

Սուրբ Պետրոսի և Անդրէի,  
Երկու եղբարց նախակոչի,  
Յակօրոսի, Յովհաննիսի,  
Զկնորս որդիքն Զերեթի:

Փիլիպպոսի, Բարթօղիմէի,  
Թովմայի և Մատթէոսի,  
Յակօր Ալփեայ Թադէոսի,  
Շմաւոնի, Մատաթէի:

Երկոտասան առաքելոց,  
Ի Քրիստոսէ պսակելոց:  
Այս են բաղձանք սրտից մերոց:  
Փրկել զմեզ յայտոց պղծոց:  
Եւ լիցի պահապան ծառայիս  
Աստուծոյ . ամէն:



Պարձանք հաւատացելոց ՚ի Քրիստոս  
և գովեստ սուրբ Խաչին որ Երևեցաւ  
Ճերուսաղէմ յառաջս կիւրղի հայ-  
րապետին . Մայիսի է:

Սաչն Քրիստոնէից յոյս .  
Խաչն կուրաց առաջնորդ .  
Խաչն մոլորելոց դարձուցիչ .  
Խաչն աղքատաց մխիթարու-  
թիւն . Խաչն մեծատանց սանձ .  
Խաչն ամբարտաւանից քակ-  
տումն . Խաչն ակոյեան դիւաց .  
Խաչն բանասարկուն յաղթու-

Թիւն. Խաչն մանկանց դաստի-  
 արակ. Խաչն աղքատաց մե-  
 ծու-Թիւն. Խաչն անյուսից  
 յոյս. Խաչն նաւալարաց նա-  
 ւապետ. Խաչն տագնապելց  
 հանգիստ. Խաչն պատերազ-  
 մողանց պարիսպ. Խաչն հայր  
 որբոց. Խաչն վերսկացու ա-  
 րեաց. Խաչն անիրաւաց դա-  
 տաւոր. Խաչն արդարոց խոր-  
 հրդակից. Խաչն նեղելոց հան-  
 գիստ. Խաչն տղայոց պահա-  
 պան. Խաչն արանց գլուխ.  
 Խաչն ծերոց կատարումն.  
 Խաչն խաւարելոց լոյս. Խաչն  
 Թագաւորաց վայելչութիւն.  
 Խաչն զէն յաւիտենական.

Խաչն բարբարոսաց ազատու-  
 Թիւն. Խաչն անխրատից ի-  
 մատու-Թիւն. Խաչն անօրի-  
 նելոց օրէնք. Խաչն մարգա-  
 րէից քարոզ. Խաչն առաքելոց  
 պատմութիւն. Խաչն մարտի-  
 րոսաց պարծանք. Խաչն վա-  
 նականաց պահապան. Խաչն  
 կուսանաց զգաստութիւն.  
 Խաչն քահանայից ուրախու-  
 Թիւն. Խաչն եկեղեցւոյ հիմն.  
 Խաչն տիեղերաց զգուշու-  
 Թիւն. Խաչն մեհենից աւե-  
 րիչ. Խաչն բագնաց կործանիչ.  
 Խաչն ճենճերաց ապականիչ.  
 Խաչն Հրէից դայթակղութիւն.  
 Խաչն ամբարշտոց կորուստ.

Խաչն տկարաց զօրութիւն .  
 Խաչն հիւանդաց բժշկութիւն .  
 Խաչն բորոսաց սրբիչ . Խաչն  
 անգամալուծից ուղղիչ . Խաչն  
 սպառնաց բժշկութիւն . Խաչն  
 քաղցելոց հաց . Խաչն ծարաւե-  
 լոց աղբիւր . Խաչն մերկաց վե-  
 րարկու . Խաչն անբարբառ բա-  
 րեխօս ծառայիս Աստուծոյ .  
 ամէն :



ԱՆՈՒԱՆՔ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԱՑՆ  
 ՈՐՔ ԵՆ ԲԱՐԵՒՍՍ ՎԱՍՆ ՄԵՐ

Բարեխօսութեամբ Աս-  
 տուածային սուրբ նշանին և  
 անբարբառ բարեխօսին Քրիս-  
 տոսի վասն ազգի մարդկան՝  
 սրբոց կենաց Խաչափայտին  
 Քրիստոսի . Աւաղակին սուրբ  
 նշանին . Վարազայ սուրբ նշ-  
 անին . Երեւման սուրբ նշա-  
 նին . Հաղբատայ սուրբ նշա-  
 նին . Վանկոյ սուրբ նշանին .  
 Կողբայ սուրբ նշանին . Ադի-  
 նեայ սուրբ նշանին . Սերբիայ  
 սուրբ նշանին . Մառառայ  
 սուրբ նշանին . Գանձասարայ

սուրբ նշանին : Եւ Քրիստոսի  
 սուրբ գեղարդին . Գետար-  
 գել սուրբ նշանին . Ապարա-  
 նից սուրբ նշանին . Կարմրակ  
 սուրբ նշանին . Սքանչելագործ  
 սուրբ նշանին . Ծիծուան սուրբ  
 նշանին . Աղթամարայ սուրբ  
 նշանին . Սանահնու սուրբ  
 նշանին . Կիարոսի սուրբ նշա-  
 նին . Վարոսի սուրբ նշանին .  
 Կոստանդիանոսի սուրբ նշա-  
 նին և Տապանակի սուրբ նշ-  
 նանին . Վրաց Հոռոմոց սուրբ  
 նշանին . Կոստանդնուպոլսոյ  
 սուրբ նշանին . Հապեշու և  
 Խաթոյ սուրբ նշանին . Հա-  
 ցունեաց սուրբ նշանին որ 'ի

դալստեանն յառաջագոյն .  
 Գայլակայ սուրբ նշանին . Հըն-  
 դու սուրբ նշանին . Կապնկայ  
 սուրբ նշանին . Պիղեռու սուրբ  
 նշանին : Հռիփսիմէի սուրբ  
 նշանին . Բոգու սուրբ նշանին .  
 Սարի սուրբ նշանին : Եւ այլ  
 ամենայն սուրբ նշանացն որք  
 ընդհանուր տիեզերս իցեն՝  
 սոցին սուրբ և արժանաւոր  
 աղօթիւքն և անբարբառ բու-  
 րելիս սու թեամբն ողորմեա՛  
 ծառայիս քոյ :



ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԶՈՐ ԱՐԱՐ

Եւ Քրիստոս բժշկեաց ՚ի ժո-  
ղովրդենէն բազում հիւանդս .  
լուսաւորեաց զկոյրս, հալա-  
ծեաց ՚ի մարդկանէ զդեւս,  
սրբեաց զքորոսս, գնացոյց  
զանդամալլածն՝ որ ՚ի բեթհէզ-  
դայ անկեալ դնէր երեսուն  
և ութ ամ, և յարոյց ՚ի մե-  
ռելոց զչորեքօրեայ մեռեալն  
և սյլ անթիւ սքանչելիս և  
հրաշագործութիւնս արար .  
Նոյն ողորմութեամբն իւրով  
հեռի արասցէ ՚ի մէնջ զգլու-  
խացաւն, զաչաց ցաւն, զա-

կանջացաւն, զատամանց ցաւն,  
զարտացաւն, զմիջաց ցաւն,  
զկշտացաւն, զխիթն որովայնի,  
զճնկացաւն, և յամենայն  
ցեղ ցաւոց ազատեսցէ, և  
օգնական և պահապան լիցի  
ճառայիս Աստուծոյ . ամէն :



Վերոտին յաւելուած կրկին հեծու-  
թեան նորին հսկողի առնայն աղերս  
մաղթանաց բանի :

Ի ԽՅՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍԲ

ԸՆԴ ԲՍՈՍԻԾՈՅ

ԲՅՆ ԶԴ .

Ա. Ս. Ս. քրայ երկնաւոր, թա-  
գաւոր բարձրեալ, Տէր բոլո-  
րից, ամենից ակնկալութիւն,  
ատեղծող տեսականաց, հաս-  
տիչ իմանալեաց, պատճառ  
եղանութեանց, կաղմիչ հան-  
դերձեւաց, տուիչ լուսոյ, ա-  
ռիթ առաւօտու, պատրաս-  
տիչ վաղորդայնի, երեւեցու-  
ցիչ երեկտրի, տարրիչ խա-  
ւարի. արուեստաւոր բարե-

հրնար, իմաստութեան գոր-  
ծօնեայ, քաւարան օրհնեալ,  
հալիչ մեղանաց, հալածիչ ցա-  
ւոց, քակտիչ դառնութեանց,  
պահպանարան հանգստեան,  
հնարք նիրհման, յարմարիչ  
քնոյ, պարգեւիչ ննջման .  
չնչոյ յարակարգութիւն, ըզ-  
գայնութեան տեւողութիւն .  
ցրիչ ցնորից, յեղանակիչ ա-  
նրթոց, փոխարկութիւն զար-  
հուրմանց, այլայլութիւն տրի-  
բութեանց, խափանիչ խիթ-  
մանց, ընդարձակիչ կարծեաց,  
համադրութիւն ծփմանց, ա-  
հապնութիւն խարդախմանց,  
հարուածիչ դիւտոց, փախու-



ցիչ ակտից , ընկղմիչ գայ-  
թակղութեանց :

Բ. Պաշտպանեան երկնաա-  
տեղծ ձեռամբդ , զօրացն  
բարձրացեալ քո աջովդ , ամ  
փոփեան ամենակալդ թեւօք ,  
ճաճկեան Աստուածեան իմա-  
մօքդ , ամբացն վերսկացու-  
թեամբ վերնայնոցդ . շուր-  
ջանակի սարսապեան գումար-  
տակօքդ անմահից , 'ի յամե-  
նուստ պարփակեան կցորդու-  
թեամբ հրեշտակացդ , վա-  
նեան զընդդիմամարտն իմ զե-  
նուորութեամբ զուարթնոցդ ,  
պատասպարեան զսասանեալս՝  
Աստուածածնիդ մաղթանօք ,

զբանակս անդրանկացդ բա-  
րեկարգեան ինձ պահապան :  
Բանց ընդ աչացս դիմաց եւ  
զմտացս իմ տեսանելիս , ըզ-  
գաստ արան ընդ ոգւոցս և  
զճանրաբեռն կրիցս դանդա-  
ղութիւն , վերացն Տէր 'ի ըզ-  
գայութեանցս զմածեալս յի-  
մարութիւն , բարձ , միայն բա-  
րեգործ , զպատրուակիս թանձ-  
րութիւն : Ընդ սկզբան բեր-  
մանս լուսոյ՝ զողորմութիւն քո  
ճագեան , ընդ ելից արեւուն՝  
արդարութեան արեգակնդ 'ի  
յանձկութիւն սրտիս մոցէ .  
ճառագայթ քո փառացդ՝ 'ի  
յիմաստիցս խորհրդանոց ջա-

հեցի: Խաչիդ տեսունսդ բու-  
 թիւն ընդ շունչս և ընդ մար-  
 մինս համասփիւռ տարածեա-  
 ցի: Յանձն առնեմ քեզ յա-  
 լուքս՝ դքս յարմարեալ տա-  
 ղաւարս պահպանաւ ոգւոյս  
 որ ՚ի սմին: Չի դու ես Սա-  
 տուած անքննին, առ՝ ամենե-  
 սին բաւական և յամենայ-  
 նում բովանդակ, օրհնեալ  
 յաւիտեանս. ամէն:



Ի ԽՈՐՈՅ ՄՐՏԻՅ ԽՕՍԻՐ  
 ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Բա՛ն ԶԹ.

**Ս**ատուած և Տէր, կեանք  
 և արարիչ, ողորմանձ, գթանձ,  
 լոյս, երկայնամիտ, անոխակալ,  
 մարդասէր, ամենապուժ,  
 պարգեւատու, փրկիչ, օրհ-  
 նեալ, գովեալ, բարեբանեալ:  
 Գարան ամբուժեան, պատրս-  
 պարան վստահութեան, ա-  
 ռանց նենգութեան բարի,  
 առանց խուարի ճառագայթ,  
 քաւիչ մեղաց, ողջացուցիչ  
 վերաց, անհատանելեաց հը-  
 նարք, անմատչելեաց հպա-

ւոր , անյուսու թեան ելք ,  
անուն քո խոստովանեալ Առ-  
տուծոյ Որդի . և Հօր քոյ ընդ-  
քեզ հզօրի , և ահաւորի , և  
Հոգւոյդ ամենակալի և ընդ-  
քեզ երկրպագելոյ՝ փառք  
և պաշտօն գոհաբանութեան  
Եւսեփեանս . ամէն :



Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻՑ ԽՕՄԲ  
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Բան Գ .

Ո . Բարերանեալ Աստուած  
երկնաւոր , միայն արարիչ ,  
Տէր ամենակալ , մեծութիւն  
ահեղ . գթութիւն օրհնա-  
բանելի . ողորմութիւն խոս-  
տովանելի . բարերարութիւն  
երկրպագելի . խնամակալու-  
թիւն պաշտելի . մարդասի-  
րութիւն տօնելի . պահպա-  
նութիւն խնկելի . բարձրեալ  
անքննին . մերձաւոր կամա-  
րար . ապաւէն անկապած ելի .

մխիթար սրտից . փարատիչ  
 վշտաց . ապաքինիչ ցաւոց .  
 սպառումն վհատութեանց .  
 բարձումն պարտեաց . փո-  
 խարկիչ կարեաց . կարգաւո-  
 ըիչ կրից . յարմարիչ բանից .  
 տանձարկու լեզուի . շրջադ-  
 րութիւն շնչոյ . կացուցիչ  
 հագադի . ամփոփիչ խորհրդ-  
 քոց . կրթարան կամաց . ար-  
 ձանացուցիչ յուզմանց . հան-  
 դարտութիւն մրրկաց . խա-  
 ղաղութիւն ծփանաց . որ  
 ունիս զթեւոց ամենրնից  
 իշխանականիս , և իմաստու-  
 թեամբ նուաճեալ առ քեզ  
 դարձուցանես :

Բ. Պահարանեալ միշտ ե-  
 րախտաւոր , որ հեղութեամբ  
 անհպարտութեան երկայնա-  
 մտեալ հանդէս տենչանօք  
 անձառ հրաշիւք յանձինս  
 սրբոց Թաշաւօք էից համայ-  
 նից , ամենայնիւ ծանուցեալ  
 գթած . սկիզբնասայր և նա  
 խաչուիղ սիրայն ընթացից .  
 ճանապարհ կենաց . որ ա-  
 ռաջնորդես քաղցրութեամբ  
 դիմելոյս 'ի լոյսդ վերին :  
 Ձեռնկարու մեծ վտասաւ-  
 թեան , սր ոչ թողացուցանես  
 դայթակցելոյս 'ի վայր կոր-  
 ծանիլ . յուսոյ կերպորան ,  
 ճշմարիտ առհաւատչելու ա-

դաչողաց մատանց յայտնի ե-  
 րեւեալ, ապաւինութիւն հան-  
 գըտեան, որ ոչ երբէք մատ-  
 նեւ վտանգի դատասարտու-  
 թեան: Ազատութիւն շնոր-  
 հաձիր, որ տաս լիապէս ա-  
 ռանց փոխատրութեան փր-  
 կանաց, աւատութիւն ան-  
 նախանձելի, որ քոյին փառա-  
 ւորութեամբ զանարգ նիւթ  
 հողոյս ձօնացուցանես: Պայ-  
 ծառութիւն անսուեր, որ  
 ճառագայթիւք ահեղ բարձ-  
 րութեան սարածածկեալ ըզ-  
 թշուառս՝ կրկին բարգաւաճ  
 առնես: Քաւիչ մեղանաց բող-  
 մաց, որ ղհերքեալս ՚ի փր-

կութենէ առաջնովն սպծա-  
 ռութեամբ նորոգել՝ վերստին  
 վայելչացուցանես: Հնարաւոր  
 դիւրահաս առ ամենայն համ-  
 բաւ գերամբարձութիւն յա-  
 ւէտ յառաջեալ, ելք վտա-  
 հութեան առ խոստացելոցն  
 վայելս, երանութիւն անձ-  
 կալի, յոր ղկենդանութիւն  
 շնչոյս լքանելն է ակորժելի,  
 ղի ղքեղ գտից կենդանի:  
 Կամք անփոխադրելի առ ՚ի  
 քաւութիւն գերւոյս զօրա-  
 ցեալ ամենագովելի, անոր-  
 խալելի դեղ կենաց, որ և  
 մեռելոց բնաւին եղծելոց  
 առնես զբանջելս: Ամենա

ատեղծ աներկբայելի, որ ըզ-  
հուրք կիզեալն, և զհողմով  
հոսեալն, և զժանեօք դաղա-  
նաց ծախեալն, 'ի բլթթեւ  
ական նովին հիւթականու-  
թեամբ անպսկաս յարուցա-  
նես: Անհաւասար համարձա-  
կութիւն, յորում Աստուած-  
օրէն պարծանօք պարծիլն է  
իրաւացի:

Գ. Հայենաց Տէր յերկնից  
զուարթ քաղցրութեամբ յա-  
մենակործան վտանգ նեղե-  
լոյս, և արն անդորր հանգըս-  
տական դիւրաւոր 'ի բազմա-  
տապնապս հեծութենէ: Եւ  
զյարուցեալ գումարս սա-

տակչացն, եթէ սպառազէկբ  
այրական դժնեայ հնարաւո-  
րութեան բուռն մարտակցաց  
պատկանեալ զինուք, եթէ  
մեղաց տգեղ եւ քո ատելի  
կերպարանք, եթէ ցաւոց և  
ախտից վատնիչ և կորստական  
նշմարանք, մեքժեցես, հան-  
ցես, հատցես, խափանեցես  
եւ հարածեցես՝ հեռի սահ-  
մանաւ իսպառ տարագրեալ  
անդարձ որոշմամբ վերստին  
կորստեան. և կառուցես,  
կացուցես նպատակ կենաց  
եւ ամուր մահարձան՝ զնշան  
Խաչիդ ապաւինելոյս 'ի քեզ  
փրկութիւն: Եւ յայսմ ան-

պարտ և անպատիր և անվա-  
 նելի արուեստից ահաւորիդ  
 մեծութեան, լուծցին սրտ-  
 դայթքն գաղտնածածուկ սա-  
 տանայականք. կապտեցին  
 մեքենայքն, վասնեացին դայ-  
 թակղութիւնքն, խայտառա-  
 կեացին հաղբիցն դրութիւնք,  
 յայտնեացին երեւոյթք որ-  
 սոյն. դայցին նենգողին ծու-  
 ղակք, վերացին վարմին վե-  
 բարկութք, տոչարեացին որո-  
 մանցն բոցք, նզովեացին բըռ-  
 նաւորին չարաբանութիւնք,  
 կարեացի լար խաբէութեան  
 ՚ի մահ սրտոյն, պարզեացին  
 պատրաղին բանասրկութիւնք.

պոկասեցին զէնք զըպար-  
 տողին, անկցին սուսերք մա-  
 հաբերին, սուզեցին սադ-  
 բողին պատրաստութիւնք,  
 արձակեցին տառուք տաղ-  
 նագողին: Ս. յայլեացին սուտ  
 կերպարանք կեղծաւորին,  
 աստակեցին խրոխտականայն  
 խիստ յարձակմունք, զբուես-  
 ցին կցորդութիւնք կերչացն,  
 բաժանեացին աղինք աւազա-  
 կոցն, քայքայեացին բոյլք  
 բարբարոսացն, քանդեցին  
 ամբոցք ասրատամբողացն, ար-  
 զելլցին ամպրոպք յանդգնե-  
 լոցն, փարատեացին փորձողին  
 անձրեւք, հալեացի և զամա-

բեցի եղեամն ազանդաւօ-  
րին : Խորտակեցի եղջիւր  
գոռողին , մանրեցին ամ-  
բառնայիք դրօշկն կերպա-  
րանաց . փշրեցին ամբար-  
հաւածութիւնք հպարտացե-  
լոցն , նահանջեցին դիմեց-  
մունք ճակատելոցն . քակ-  
տեցին միտքանութիւնք դօ-  
րացն Բեղխարոյ , թէ անմար-  
մինք և եթէ մարմնաւորք ,  
փախիցեն ընդ նոյն ճանա-  
պարհ 'ի մի շաւղաց հետոց'  
յեթին տարակցս , 'ի գութն  
ինձ փորեալ 'ինքեանք ընկ-  
ձեացին : Յեղանակեցին ձմե-  
րունք ձանձրացուցին , հատ-

ցի կասն կցորդութեան մըշ-  
տաջան աւազակին , նողկացի  
մտացս կացից' համբոյր շող-  
քորթին . ընդ միջեալ մեկ-  
նեցին նետածգութիւնք նեղ-  
ջին , կացցի 'ի սասանման նաւ-  
խարգախողին . խլեցին յար-  
մատոց անտի ատամունք խա-  
նայիցս ճանողին :

Դ . Վասն փայտիդ օրհ-  
նութեան կենաց , յորում  
պրկեցար Սատուածդ անլմ-  
բունելի . յիշտակաւ բե-  
ւեռացդ , որով 'ի գործի  
մահուն մածուցար արարիչդ  
երկնի և երկրի , արեամբդ  
տերունականաւ , որով զվն-



չայն մեծ կարգիւ ածեալ  
 որոացար . լեղւոյն դառնու  
 թեամբ , զոր արբեալ՝ զդե  
 ղատուութիւն կորուսչին ար  
 տաքս հեղեր , սլ սոմարանու  
 թեամբ ըղձական ճառիւք  
 կրկն տարապիւլեաց , որով  
 զլրբութիւն հակառակողին  
 բմբերանեալ ամաչեցուցեր .  
 անուամբդ անհասականաւ ա  
 մենայնիւ անթարգմանելոյդ ,  
 յորմէ դողան և դատապար  
 տին սոսկացեալ սաստիկ սար  
 սափմամբ բնութիւնք ամե  
 նայն երեւութից և աներե  
 ւութից , եղևցին այս ամե  
 նայն պարգեւք շնորհաց խոս

տովաներայս 'ի պաշտպանու  
 թիւն , 'ի բժշկութիւն եւ 'ի  
 քաւութիւն : Եւ մահաբեր  
 դառնաթոյն օձին , եւ որ 'ի  
 նմա սղղեաց տիեղերադա  
 չարութիւնն , 'ի սատակումն  
 եղևցի նորին . նայն ինքն 'ի  
 կորուստ եւ յանբժշկական  
 հարուած տանջանայն՝ սովա  
 մասնեացի , կապեացի և ըմ  
 բունեացի : Եղևցի ողորմու  
 թիւն ստեղծողիդ ընդ իս ,  
 և շունչ ուբոյս իմ ընդ քեզ  
 անբաժանօրէն կապու միտ  
 ցեալ 'ի մի :  
 Եւ որ որ ընթերցցի զայս  
 աղերս ձայնի մաղթանաց դոչ

ման՝ աղօթից հայցման՝ ծերոյ  
 և տղայոյ, կուսի և երիտա-  
 սարդի, և եթէ յաղախնեաց  
 որ պաղատեցի Աստուած-  
 սիրաբար, հաւասարապէս  
 անաչառութեամբ ընկալցին  
 ՚ի քէն մասն երանութեան,  
 պարտուց աղատութեան,  
 հաստեալ վերտին յանարա-  
 տութիւն նորոգ մաքրու-  
 թեան, նկարեալ դարձեալ  
 զբոյգ կերպարան անփոփո-  
 խելի: Ահա տիրապէս հնա-  
 բաւոր զօրեղ, անպստում,  
 անհաս, անիմանալի, տեսցես  
 աստանօր ՚ի հառաչանս կող-  
 կողանաց այսր հեծութեան,

որ ՚ի բոլորից շրթանց ընծա-  
 յեալ քեզ մատուցանի, վասն  
 Հօր քոյ երկնաւորի և բարե-  
 րարի, և Հոգւոյն սրբոյ փա-  
 ռակցի եւ կենդանատուի.  
 Աստուածածնիդ բարեխօսու-  
 թեամբ, եւ խնդրուածովք  
 ամենայն սրբոց: Զի դու ըս-  
 տեղծեր զամենայն, և ՚ի քէն  
 եղէն ամենայնք, և դու աի-  
 բեռ ամենայնի, և քեզ փառք  
 յամենեցունց, միզ յիսկու-  
 թենէ անժամանակ Յրրոր-  
 դութեանդ, զուղակցապէս  
 փառաւորեալ յանբաւս, եւ  
 յաւխտենից յաւխտեանս.  
 ամեն:

Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻՑ ԽՕՍԲ  
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

ԲՆՆ ԶԵ.

Ա. Արեգակն արդար, ճա-  
ռագայթ օրհնեալ, լուսոյ  
կերպ սրան, փափ սգ անձկու-  
թեան, բարձրեալ անքննին,  
զօրեղ անպատում, բարեոյ  
բերկրութիւն, յուսոյ տեսու-  
թիւն, դովեալ երկնաւոր, թա-  
գաւոր փառաց, Քրիստոս ա-  
բարիչ խոստովանեալ կեանք:  
Եւ արդ՝ զթերութիւն վրի-  
պանաց բազմատեսալ ձայնի  
եղկելոց՝ ամենազօրդ բանի-  
լցեալ մատուցես յաղերս

( 155 )

հաճութեան Հօր. բումբարձ-  
րելոյ: Որ վասն իմ 'ի փորձ  
եկիր անիծից, կերպաբանեալ  
զիմ նմանութիւն՝ ամենեւին  
կենաց օրհնութիւն, վերնոց  
եւ ներքնոց բարեխնամող  
տեսուչ համայնից: Զի թէ  
յոնձն առեր մեռանիլ վասն  
իմ՝ Ատուած և Տէրդ բոլո-  
րեցուն, սրչափ հաճեացիս ա-  
ռաւել և այժմ վտանգաւորս  
կրից կարեկցիլ, ընդ իմ պար-  
տաւորիս միշտ աղօթելով  
ազգակցաւ մարմնոցդ առելոյ  
'ի մէնջ՝ առ համապստիւղ  
բո Հայր:

Բ. Եւ վասն արեանդ պա-

առականի միշտ մատուցելոյ  
 ՚ի հաճութիւն կամաց առաք-  
 շիդ՝ բարձցին վտանգք մե-  
 ղուցեալ դատասարատելոյս .  
 թողցին պարտիքն . ապաքի-  
 նեցի ամօթն . մոռացին  
 պատկառանքն . բարեգոր-  
 ծեացին դատակնիքն . սատա-  
 կեցին սրդունքն . վերացի  
 լալն , հանդարտեացէ՝ կրք-  
 ճումն ատամանցն . սպտեա-  
 ցին սղբքն . հացոցին արտա-  
 տուքն . մերժեցի սուղն . հա-  
 լածեցի խաւարն . վառնեցի  
 հուրն սաստկութեան . հեր-  
 քեցին տանջանարանքն բազ-  
 մոյս քան մօրինակք :

Գ . Եկեացն գթութիւնք  
 կամողիդ եւ պարգեւողիդ  
 կենաց ամենկց . ծագեացի  
 լոյսդ . արագեացէ փրկու-  
 թիւնդ . հասցէ օգնութիւնդ .  
 ժամանեցէ այցելութիւնդ .  
 կանխեացէ ցօղդ ողորմու-  
 թեան , յառաջեացէ արբուսցէ  
 զանդաստանս պասքեալ՝ ան-  
 կեալ ոսկերացս թշուառու-  
 թեամբ ՚ի վիհն մահու . ծաղ-  
 կեցուցէ պողարերեացէ բա-  
 ժակդ երկնաւոր արեան կե-  
 նարարիդ՝ զերկիրս խնամեալ  
 տուրն լուսոյ , որ անծախա-  
 պէս միշտ պատարագի յի-  
 շատակ կենաց փրկութեան

հոգւոց ննջեցեալոց : Ձի ամե-  
նայնիւ մահացեալ հոգիս  
մարմնովս մեղաց՝ շնորհօք քո՝  
զթանձ , 'ի քեզ զօրացեալ  
քեւ նորոգեցայց , զատեալ  
'ի մեղաց անմահ կենդանու-  
թեամբ 'ի յարութեանն ար-  
դարոց . Հօք քում օրհնեցեալ  
Ընդ որում քեզ փառք , եւ  
Հոգւոց սրբոց բարեբանու-  
թիւն՝ վայելչական գոհու-  
թեամբ , այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից . ամէն :



Գոհանամք զքէն , ո՛վ ա-  
մենասուրբ Երրորդութիւն ,  
Հայր եւ Որդի եւ Հոգիդ սուրբ  
որ ասացեր արասցուք մարդ  
ըստ պատկերի մերում , եւ ա-  
ռեր հոգ յերկրէ , եւ փշմամբ  
օրհնեալ շնչոյ քոյ դոյացուցեր  
զմարդն Ադամ , վասն որոյ  
օրհնեմք զմեծութիւն քո :  
Գոհանամք զքէն , Տէր , որ  
զմարդն Ադամ զարդարեցեր  
եօթնարփեան շնորհօք եւ եր-  
կոտասան փառօք . վասն որոյ  
օրհնեմք զշնորհս քո : Գոհա

նամք զբէն, Տէր, որ 'ի դը-  
րախան Յղեմ եգեր զԱդամ  
անձառելի անպատմելի, եւ  
հիահրաշխնդութեամբ. վա-  
սրն որոյ օրհնեմք զարարչու-  
թիւն քո: Գոհանամք զբէն,  
Տէր, որ յետ պատրելոյն Ա-  
դամայ՝ յԱրգեղայոս անուն  
օձէն, և արտաքսելոյն 'ի դը-  
րախտէն, որով 'ի դժոխս գը-  
րուեցաւ, աղատեցեր. վասն  
որոյ օրհնեմք զփրկութիւն քո  
Գոհանամք զբէն Տէր, որ ա-  
ռաքեցեր զանդրանիկն քո  
զՄիածին Բանն՝ որ վասն մե-  
րոյ փրկութեան խաչեցաւ,  
թաղեցաւ, յարեաւ, համ-

բարձաւ. վասն որոյ օրհնեմք  
զմեծ մարդասիրութիւն քո:  
Գոհանամք զբէն, Տէր, որ  
զսուրբ մարմին և զսուրբ ա-  
րիւննորա պարգեւեցեր մեզ  
կերակուր հոգւոյ և կենդա-  
նացուցիչ. վասն որոյ օրհնեմք  
զպարգեւս քո:

Գոհանամք զբէն, Տէր, որ  
զմկրտութիւն ուսուցեր 'ի  
Յորդանանէ, և կոչեցեր 'ի խա-  
ւարէ 'ի լոյս: Եւ ետուր Յոր-  
դէգրութիւնն վերին. վասն  
որոյ օրհնեմք զնորհաբաշ-  
խութիւն քո: Գոհանամք ըզ-  
բէն, Տէր, որ եօթն խորհուրդ-  
եկեղեցւոյ կազմեցաւ 'ի քո-

յինդ շնորհէ, և խոստովանու  
 թեամբ թողութիւն շնորհե  
 ցեր. վասն որոյ օրհնեմք զա  
 ռատապարգեւ. գթութիւն  
 քո: Գոհանամք զքէն, Տէր,  
 որ անձրեւ և ցօղ տաս երկ  
 բի, և բուսանին հաց և հան  
 դերձ և ամենայն մտեղեաց  
 կերակուր: վասն որոյ օրհ  
 նեմք զբազմաբաշխ ողորմու  
 թիւն քո: Գոհանամք զքէն,  
 Տէր, որ տաս յաջողութիւն  
 վատտակոց մերոց, և շնորհս  
 արուեստաւ որաց. վասն որոյ  
 օրհնեմք զբազմաբուեա  
 տեսչութիւն քո: Գոհանամք  
 զքէն, Տէր, որ միշտ բաղդ

լութեամբ հայիս յարարածս  
 քո, և օր ըստ օրէ շնորհես  
 զբազմաղեղ ողորմութիւն քո.  
 վասն որոյ օրհնեմք զանչափ  
 գթութիւն քո: Գոհանամք  
 զքէն, Տէր, որ մեղաւորաց և  
 զղջացելոց թողութիւն շնոր  
 հես, ներես, և ոչ եղծանես  
 վասն որոյ օրհնեմք զանյիշա  
 չարութիւն քո: Գոհանամք  
 զքէն, Տէր, որ զեղանակս  
 տարւոյն՝ զամառն և զձմեռն,  
 զաշունն և զգարունն արա  
 բեր ըստ բնութեան մերում.  
 վասն որոյ օրհնեմք զարարչա  
 գործութիւն քո: Գոհանամք  
 զքէն, Տէր, որ յայսմ ամի եւս

ապրեցուցեր զմեզ անվրդով,  
 անմահ և անկասկած. վասն  
 որոյ օրհնեմք զտէրութիւն. քո  
 Գոհանամք զբէն, Տէր, որ  
 զմեզ 'ի մահտարածամէ և  
 յամենայն պատահարաց պա-  
 հեցեր. վասն որոյ օրհնեմք  
 զպահպանութիւն. քո: Գոհա-  
 նամք զբէն, Տէր, որ 'ի հըր-  
 կիզութենէ, 'ի հեղեղէ, 'ի  
 շարժմանէ, 'ի կայծականց,  
 'ի խորշակէ և 'ի սատակմանէ  
 ապրեցուցեր. վասն որոյ օրհ-  
 նեմք զապաւինութիւն. քո:  
 Գոհանամք զբէն, Տէր, որ  
 օրհնեցեր 'ի լերինն Ձիթե-  
 նեաց զԿաթողիկոսունս, ըզ-

Պատրիարքունս և զՆախկո-  
 սոսունս՝ որ ճրագ և լոյս ե-  
 ղեն աշխարհի. վասն որոյ օրհ-  
 նեմք զնորհաբաշխութիւն. քո:  
 Գոհանամք զբէն, Տէր, որ ըն-  
 ձեռեցեր ադամեանս բնու-  
 թեան. քահանայութիւն՝ որ  
 հրեշտակաց էր կարգ, յա-  
 զագս թողութեան յանցանաց  
 մերոց. վասն որոյ օրհնեմք  
 զփրկութիւն. քո: Գոհանամք  
 զբէն, Տէր, որ զսարկաւա-  
 գունս, զպաշտօնեայս՝ և ըզ-  
 ջահնկալս սահմանեցեր. վասն  
 որոյ օրհնեմք զլուսաւորու-  
 թիւն. քո: Գոհանամք զբէն,  
 Տէր, որ զբանաւոր հօտ՝ ըզ-



ժողովուրդս քո, ընկալեալ  
 ունիս 'ի ճոց քո, եւ որպէս  
 զտապանն Նոյեան ազատես  
 'ի հեղձմանէ մեղաց, վասն  
 որոյ օրհնեմք զգարմանահը-  
 րաչ զթութիւն քո: Գոհա-  
 նամք զքէն, Տէր, որ զմեղու-  
 ցեալ ժողովուրդն ոչ պատ-  
 ժես 'ի տան քում քաւարա-  
 նի, այլ զդարձումն նկատես,  
 վասն որոյ օրհնեմք զերկայ-  
 նամտութիւն քո: Եւ վասն  
 մեծի եւ բարձու ողորմու-  
 թեան քոյ, խոնարհեցն, Տէր,  
 զունկն քո 'ի ժամուս յայս  
 միկ եւ տուր մեզ յերկնից  
 'ի սրբութենէդ՝ շնորհ, ձիբ,

ողորմութիւն, քաղցրութիւն,  
 կարողութիւն, մեղաց թո-  
 ղութիւն, առատութիւն, մե-  
 ծութիւն, աշխարհիս խաղա-  
 ղութիւն, խնդութիւն, լու-  
 սաւորութիւն, հաւատ, յոյս,  
 սէր, մաքրութիւն, առաքի-  
 նութիւն, բարեաց լիութիւն,  
 հանդարտութիւն, անդոր-  
 րութիւն, զօշնութիւն, հաշ-  
 տութիւն և օրհնեալ արքա-  
 յութիւն: Եւ քեզ ընդ Որդ-  
 ւոյ, եւ ընդ սուրբ Հոգւոյդ  
 վայելէ փառք և պատիւ յա-  
 ւիտեանս, ամէն:

ՎԵՐՁ

# Յ Ա Ն Կ

ԵՐԵՍ

Հաւատով խոստովանիմ . . . . .	7
Աղօթք պահպանութեան . . . . .	22
Աղօթք վան կապանաց՝ դիւաց . . . . .	49
Աւետարան ըստ Մատթէոսի . Եւ մինչդեռ անցանէր . . . . .	52
Աւետարան ըստ Մարկոսի . Եւ եւ լուր նորա . . . . .	54
Աւետարան ըստ Դուկասու . Եւ եղև ընդ աւուրսն . . . . .	56
Աւետարան ըստ Յովհաննու . Յետ այսորիկ տօն էր . . . . .	59
Դարձ կ'սպրիանոսի . . . . .	63
Աղօթք Յովհաննու Գառնեցոյ առ սուրբ Աստուածածինն . . . . .	84
Աղօթք Յովհաննու Գառնեցոյ վան ճանապարհի . . . . .	89
Աղէրս վան զաւակ ծնանելոյ . . . . .	91

ԵՐԵՍ

Աղերս առ սուրբ Ստեփաննոս . . . 94

Աղօթք զօրաւոր առ երկնային զօրս . . . 95

Աղօթք առ սուրբ զինուորս  
Քրիստոսի . . . . . 97

Աղօթք վասն ական և շէղուի . . . 98

Աղօթք Գրիգորի Լուսաւորչի . . . 99

Մաղթանք առ սուրբ Լուսա  
ւորիչն մեր . . . . . 103

Աղօթք առ դրանն Ս. Եկեղեցւոյ . . . 104

Բան Գրիգորի Նարեկացւոյ ընդ  
դիմամարտ դիւաց . . . . . 105

Մաղթանք Նարեկացւոյ ընդ  
դէմ ամենայն շարեաց . . . 111

Աղօթք Նարեկացւոյ . Որդի!  
Աստուծոյ կենդանւոյ . . . 115

Աղօթք Նարեկացւոյ . Աս  
տուած յաւիտենական . . . 118

Աղերս առ սուրբ Առարեալն . . . 122

Գովեստ սուրբ Խաչին . . . . . 125

Անուանք սուրբ Նշանացն . . . . . 127

Հրաշագործութիւն Քրիստոսի . . . 130

ԵՐԵՍ

Բան Նարեկացւոյ . Սրբայ  
երկնաւոր . . . . . 132

Բան Նարեկացւոյ . Աստուած  
և Տէր . . . . . 137

Բան Նարեկացւոյ . Բարեբանեալ  
Աստուած երկնաւոր . . . . . 139

Բան Նարեկացւոյ . Արեգակն  
արդար, ճառագայթ . . . . . 154

Գոհաբանութիւն առ երկինս . . . . . 159



1800

... ..  
 1799 . . . . .  
 ... ..  
 1798 . . . . .  
 ... ..  
 1797 . . . . .  
 ... ..  
 1796 . . . . .  
 ... ..  
 1795 . . . . .  
 ... ..  
 1794 . . . . .  
 ... ..  
 1793 . . . . .  
 ... ..  
 1792 . . . . .  
 ... ..  
 1791 . . . . .  
 ... ..  
 1790 . . . . .



10





